

բերու մէջ: Երկրորդ՝ անոնց անկեղծութիւնը՝ չխնայելու իրենց կարգակցաց ալ՝ երբ տեղի կար հարուածելու, ինչպէս տեսանք եւ դեռ աւելին պիտի տեսնենք յետոյ: Երրորդ՝ անոնք շատ անգամ համակրողներ իսկ են այն անձանց՝ որոնց վրայ կը ծանրանան իրենց պարսաւները: Փաւստոս՝ որ Մուշեղի արբեցութիւնն ու սպանութիւնը կը վիպէ, կը պաշտէ զայն եւ անոր տոհմը: Փարպեցին գովեստով կը նկարագրէ ազնուական ընթրեաց շռայլութիւնքը. եւ կը զգանք՝ թէ Աշուշայի սեղանին վրայ ճաշակած պարարտ խորտկաց համը դեռ բերանն է: Արծրունին, որ իւր Աշոտ իշխանին եւ այլոց խայտառակութիւնքը կը ձաղէ, ընդ հակառակն հաճութեամբ կը յիշէ տոհմակցին ապաշխարողական մահը: Արիստակէս աղի արտասուօք կը շողէ իւր ամբաստանութիւնը դժբախտ Անուոյ դէմ. իսկ Շնորհալին՝ կը ներբողէ անոր զուարթութիւնը, չի պարսաւեր:

Մեր ընդհանուր նկարագրէն սակայն չի հետեւիր՝ թէ հայ աւագանւոյն մէջ կեղտ միայն տեսնելու ենք: Կային՝ կային անոնց մէջ անհատական եւ ընկերային առաքինութեանց վսեմ օրինակներ եւս, զորս դարձեալ մի եւ նոյն մատենագիրք ան-